**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր  N 1**

**ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ԵՎ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ՄԻՋԵՎ 19.06.2026թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/32-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՕԴՈՐԱԿԻՉՆԵՐԻ, ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան « » « » 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վիէլվի Սենթր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վաղինակ Հովհաննեսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 19.06.2026թ. կնքված N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/32-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1. Հիմք ընդունելով պայմանագրի կատարման ապահովումը Պայմանագրով նախատեսված ապրանքների վճարումը կատարվում է ապրանքների ընդունումից **հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:**

1.2. Կողմերը համաձայնեցին, որ Պայմանագրի Հավելված N 1-ով և Հավելված N 2-ով սահմանված ապրանքների մատակարարումը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի պահանջի հիման վրա: Առաջին մատակարարումը իրականացվում է մինչև 20 օրացույցային օրվա ընթացքում, իսկ Մատակարարի համաձայնությամբ՝ հնարավոր է նաև ավելի սեղմ ժամկետում: Հետագա յուրաքանչյուր մատակարարումը իրականացվում է Պատվիրատուի գրավոր կամ էլեկտրոնային պահանջը ստանալուց հետո՝ 3 օրացույցային օրվա ընթացքում: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է առանց համաձայնագիր կնքելու:

1.3. Սույն համաձայնագրով ուժի մեջ են դրվում Պայմանագրով սահմանված բոլոր քանակները, որոնք ենթակա են մատակարարման սույն համաձայնագրի պայմաններին համապատասխան:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/32-1» ծածկագրով Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
| --- | --- |
| «Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ | «Վիէլվի Սենթր» ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Գյումրի, Մազմանյան 3ք | ՀՀ, ք.Երևան, Գ. Նժդեհի21 |
| ՀՎՀՀ 05500411 | Ինեկոբանկ ՓԲԸ |
| «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ | ՀՀ 2050022129881001 |
| ՀՀ 1570078724667200 | ՀՎՀՀ 02235463 |
| Տնօրեն՝ Սահակ Հակոբյան | Տնօրեն՝ Վաղինակ Հովհաննեսյան |
| Ստորագրող | Ստորագրող |
| ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ | ՆՈՒՆԵ ՆԱՍԻԲՅԱՆ |
| 3711840906 | 6912740081 |
| 2026-06-23 16:36:47 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից | 2026-06-23 14:31:52 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից |